

**ՀՀ ֆինանսների նախարարություն  
Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ 1/7**

**29 մայիսի 2014 թ.**

Քննարկվեց Ա/Ձ Սեյրան Սարգսյանի 18.04.2014 թ-ի բողոքը ՀՀ ԿԱ ՊԵԿ Նոր Նորքի ՀՏ պետի 14.04.2014 թ-ի թիվ 335 որոշման դեմ:

**Ա/Ձ Սեյրան Սարգսյանի բողոքում բերված փաստարկները.**

14.04.2014 թ-ին Նոր Նորքի հարկային տեսչությունից ստացվել է թիվ 335 որոշումը, համաձայն որի բողոքաբերից ենթակա է բռնագանձման 421.992 դրամ:

Սեյրան Սարգսյանն առարկում է վերը նշված որոշման դեմ և հայտնում, որ դեռևս 1998 թ-ին ՀՀ ԿԱ ՊԵԿ Նոր Նորքի ՀՏ-ում լուծարել է Ա/Ձ-ն, մասնավորապես՝ պարտք չունենալու հիմքով իրեն թույլատրվել է լուծարել Ա/Ձ-ն: Առ այսօր Նոր Նորքի ՀՏ-ից որևէ ծանուցում չի ստացվել պարտքի վերաբերյալ:

Սեյրան Սարգսյանը նշում է նաև, որ 1998 թ-ից մինչ օրս փաստացի չի աշխատել, թոշակառու է:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 70, 71 և 72 հոդվածներով Սեյրան Սարգսյանը խնդրում է ստուգել փաստերը և վերացնել Նոր Նորքի ՀՏ պետի 14.04.2014 թ-ի թիվ 335 որոշումը:

**ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.**

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ Նոր Նորքի ՀՏ պետի 14.04.2014 թ-ի թիվ 335 որոշման համաձայն 17.03.2014 թ-ի դրությամբ Ա/Ձ Սեյրան Սարգսյանի չկատարված հարկային պարտավորությունները կազմում են 421.992 դրամ, որից պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով 371.400 դրամ (2009 թ-ի հունվարից մինչև 2012 թ. մարտ ամիսն ընկած ժամանակաշրջանի համար հաշվարկված նվազագույն սոց. վճար), ինչպես նաև եկամտահարկ 13.200 դրամ (որն առաջացել է 1998 թ-ի մայիս ամսվա հաշվարկով), հատատագրված վճար 37.392 դրամ (որն առաջացել է 1998 թ-ի հունիս ամսվա հաշվարկով):

Հանձնաժողովի համոզմամբ քննարկվող դեպքում սույն գործին առնչվող նյութերն ապացուցում են 17.03.2014 թ-ի դրությամբ Ա/Ձ Սեյրան Սարգսյանի չկատարված պարտավորությունները 421.992 դրամ կազմելու հանգամանքը:

Ինչ վերաբերվում է բողոքում նշված այն պնդմանը, որ Ա/Ձ Սեյրան Սարգսյանը պարտք չունենալու հիմքով լուծարվել է, ապա նշվեց հետևյալը:

Ա/Ձ Սեյրան Սարգսյանի գործունեությունը դադարած (լուծարված) լինելու հանգամանքը պարզելու նպատակով ՀՀ ԿԱ ՊԵԿ Նոր Նորքի ՀՏ կողմից հարցում է կատարվել ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի

գործակալություն: Ստացված պատասխան գրության համաձայն, Ա/Ձ Սեյրան Սարգսյանի գործունեությունը դադարեցված չէ (լուծարված չէ): Հետևապես, բողոքում բերված պնդումները պարտք չունենալու հիմքով Ա/Ձ Սեյրան Սարգսյանը լուծարված լինելու վերաբերյալ, չեն համապատասխանում իրականությանը:


Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

## ո Ր Ո Ղ ՈՒ Մ Է՝

ՀՀ ԿԱ ՊԵԿ Նոր Նորքի ՀՏ պետի 14.04.2014 թ-ի թիվ 335 որոշումը թողնել անփոփոխ:

Որոշմանը չհամաձայնվելու դեպքում տնտեսավարող սուբյեկտի ղեկավարը կամ նրան փոխարինող պաշտոնատար անձն իրավունք ունի բողոքարկել դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ